## 136. Գրատան նախագավթում, ս. Գրիգոր եկեղեցու մուտքի մոտ, խաչքարի եվ նրա պատվանդանի վրա

(Լուս. № 86)

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ



*Նկ. 86. Արձ. № 136։*

*ա.* խաչքարի ճակատին

1 *Նշանդ Ա̅Յ լեր բարեխաւս պարոն Աւետ(ե)*
2 *(ա)յն, լուսերին, Զէ-*
3 *նանին եւ զաւ(ակ)-*
4 *աց նոցա։*

*բ.* խաչքարի պատվանդանին

5 *Կամաւն Ա̅Յ*
6 *ես՝ լուսեր Վաղշկրաէցի եւ Զէնան ամուսին*
7 *եղբաւր իմո Աւէտեցն, կանգնեցաք գխաչս ի վ-*
8 *երա հանգստարանի սոցա, որք երկրպագէք յիշեց-*
9 *էք ի Ք̅Ս։*

Ծանոթություն.— *1-ին տողը գրված է խաչքարի ճակատին, 2—4 տողերը՝ ճակատի երեք փոքր խաչերի միջին, իրարից հեռու գրությամբ, 5-րդ տողը՝ պատվանդանի ձախակողմյան մասում, արձանագրության բնագրից դուրս մնացած տողերը՝ պատվանդանի հարթ մակերեսի վրա։*

*Խաչքարի կենտրոնում փորագրված սբ հգ (սուրբ հոգի), բնագրից դուրս համարելով, չենք դրել վերծանության մեջ։*

*Ժամանակը որոշել ենք խաչքարի և տառաձևերի օգնությամբ։*

## 137. Նախորդի տակին, տապանաքարի վրա

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Որդի պարոն Աւէտե-*
2 *ց եւ մաւր Զէնանին՝*
3 *Նէրնէր Թ̅ ամեայն փ-*
4 *ոխեցաւ առ սբ անգող-*
5 *ինսն, սուգ մե-*